ՀՀ ԿԳՄՍ նախարարություն
«Սիսիանի ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հայեցի դաստիարակության սկզբունքների ձեւավորումը հասարակագիտության ժամերին

Հեղինակ՝ Մարինե Պետրոսյան
Ղեկավար՝ Ռուզաննա Խաչատրյան

2023

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

Հետազոտության ընթացք_____11

Եզրակացություն_____14

Գրականության ցանկ_____15

Դասի պլան_____16

Ներածություն

Հայրենասիրություն. Մարդկային առաքինությունների թագն ու պսակն է դա։ Մարդկային բարոյական հատկությունները իր մեջ միացնող այդ գերագույն առաքելությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը եւ անսպառ աղբյուրը նրանց ուժի եւ մեծության։ Նա այնքան ջերմ է մի ժողովրդի մեջ, որքան փոքր է այդ ժողովուրդը, եւ որքան ամբարիշտ են նրա հարեւանները։[1]

Հասարակական կյանքի տարբեր ոլորտներ դիտարկվում են գիտության տարբեր ճյուղերի կողմից։ Նրանց ընդհանուր անվանումն է հասարակական գիտություններ։ Այն ներառում է փիլիսոփայությունը, պատմությունը, սոցիոլոգիան, քաղաքագիտությունը, իրավագիտությունը, հոգեբանությունը, հասարակագիտությունը եւ այլն։ Հետեւաբար, հասարակագիտությունն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել տարբեր գիտաճյուղերի կուտակած համաշխարհային փորձը։ Սեփական կարծիքը կազմելու համար պետք է համադրել այդ համակողմանի գիտելիքները եւ փորձառությունը։

Հասարակագիտությունը յուրահատուկ գիտություն է ի տարբերություն բազմաթիվ այլ գիտությունների՝ հասարակագիտությունը չի տալիս պատրաստի պատասխաններ։

Այն տալիս է միայն գործիքներ, մտածելու ձեւեր եւ մոտեցումներ, որոնք կիրառելով ու քննադատաբար յուրացնելով կարող ենք կառուցել մեր սեփական արժեքային համակարգն ու աշխարհայացքը։

Հայեցի դաստիարակության սկզբունքների ձեւավորումը կարեւոր է դպրոցում, քանի որ աշակերտները իրենց անձնական ու հասարակական կյանքում հաճախ են առնչվում խնդիրների ու արժեքային կողմնորոշիչների, որոնք կարող են ձեռք բերվել հասարակագիտության ժամին։

Այդ խնդրի լուծմանը նպաստելու համար կարեւոր է, որպեսզի հասարակագիտության ուսուցիչները հստակ գիտակցեն հասարակագիտության տարբեր սկզբունքների, բաղադրիչների կրթական ներուժը, տեղն ու դերը ուսումնական գործընթացում։

---

[1] Գարեգին Նժեհ, Էջեր իմ օրագրեն, Երևան, 2001, էջ 36-39։

Եթե ցանկանում ենք հասնել միջնակարգ դպրոցն ավարտողի կրթակարգում կատարելատիպի իրականացմանը, չենք կարող անտեսել կրթության եւ մանավանդ դաստիարակության այնպիսի կարեւոր բաղադրիչ, ինչպիսին հայեցի դաատիարակությունն է։

Գրական ակնարկ

Սովորողների հայեցի դաստիարակության ձեւավորումը բոլոր սերունդների եւ նախորդ պատմական ժամանակաշրջանների համար կենսական նշանակություն է ունեցել, որտեղ նյութական, հոգեւոր, գեղագիտական, բարոյական պահանջմունքները գտնվել են որոշակի հարաբերակցության մեջ, եւ ներդաշնակ զարգացած անհատի լիարժեքությանը նպաստել է ազգային մշակույթը: Մեսրոպ Մաշտոցը եւ Մովսես Խորենացին, Խաչատուր Աբովյանը եւ Հովհաննես Թումանյանը, Եղիշե Չարենցն ու Մարտիրոս Սարյանն իրենց աշխատություններով ծառայել են ազգին, ժողովրդին:Այսօր ուսուցանողի խնդիրն է ոչ թե հարցի վերաբերյալ տալ սպառիչ տեղեկատվություն, այլ սովորեցնել գտնել տեղեկատվություն, ընկալել, մշակել ու օգտագործել այն: Այդ առումով կրթագետները պնդում են, որ հասարակության արդի ուսուցումը պետք է լինի հետազոտության, պրոբլեմային, հարցակենտրոն ուսուցում, որտեղ ամենակարեւոր նպատակներից մեկը սովորողի մեջ հետազոտություն կատարելու հմտության զարգացումն է:

1. Անհատականացման սկզբունք

Հասարակությանը մարդկանց համարել կենսագործունեության միջավայր է, նրանում մարդիկ «հասարակական միավորներ» են, որոնք միավորված են հազարավոր կապերով: Մարդկային հասարակության մի կարեւոր առանձնահատկությունն այն է, որ մարդիկ փորձում են նաեւ համապատասխանեցնել միջավայրը իրենց կարիքներին: Մարդու՝ որպես հասարակական էակի, մյուս առանձնահատկությունն այն է, որ նա վարում է նպատակասլաց գործունեություն: Երեխայի մարդ դառնալու գործընթացը տեղի է ունենում մարդկային միջավայրում՝ հասարակությունում:

Հասարակական միջավայրի օրինակ է դպրոցը եւ դասարանը: Դպրոցական կարգն ու կանոնները, երեխաների ու ուսուցիչների վարքագիծն ու հարաբերությունները, դասապրոցեսի կազմակերպումը հասարակական հարաբերությունների օրինակներ են, որոնք նպաստում են հայեցի դաստիարակությանը:

Հասարակական գիտությունների զարգացման արդյունքում կուտակված գիտելիքները եւ փորձառությունն օգնում են հասարակության անդամներին կողմնորոշվելու արագ փոփոխէող աշխարհում, բացահայտելու գործունեության այլընտրանքային տարբերակներ, ձեւավորելու կարծիք, մշակելու եւ իրականացնելու գործողությունների արդյունավետ ծրագրեր։

2. Բարոյականության եւ արժեքների հստակեցման սկզբունք

Բարոյականությունը, որպես նորմերի եւ կանոնների միասնականություն, ընդգրկում է իդեալները եւ արժեքները։ Իդեալը կատարյալն է, մարդու ձգտման բարձրագույն նպատակը, բարձր բարոյական պահանջների պատկերացումը, մարդու առավելագույն հնարավորությունների սահմանը։

Արժեքները մարդու կամ մարդկության համար ամենակարեւոր, գնահատելի, սրբիության նման էական երեւույթներն են։ Արժեքներով են որոշվում մարդու գործունեությունը, նպատակները, առաջնահերթությունները հիմնված են արժեհամակարգի վրա։

Մարդու արժեքային համակարգում առանցքային տեղ է գրավում հայրենասիրությունը՝մարդու նվիրնածությունը եւ սերը հայրենիքի, ազգի նկատմամբ, պատրաստակամությունը յուրացնելու, զարգացնելու եւ տարածելու նրա մշակույթը, լեզուն, ավանդույթները, հավատը։ Հայրենասերը հպարտանում է իր երկրի, մշակույթի նվաճումներով եւ ձեռքբերումներով, մտահոգվում հասարակական հիմնախնդիրներով։

Արժեքների հստակեցման սկզբունքի մասին առաջին անգամ խոսել են Ռաթսը, Հարմինը եւ Սիմոնը «Արժեքներ եւ ուսուցում գրքում»։ Նրանք արժեքների խնդիրը տեսնում էին երեք փոխկապակցված գործընթացների ՝ ընտրություն, արժեւորում եւ գործողություն, միասնության մեջ։ Այսինքն մարդիկ, ինչ-որ բաներ կարեւոր համարելով,ընտրում են, դրանք արժեւորում են, ապա ըստ այդմ գործում։

Արժեքների հստակեցման սկզբունքի ջատագով Ջեյմս Բենկսը (1986թ.) մշակել է մեթոդ, որով կարելի է աշակերտներին օգնել՝ հասկանալու եւ որդեգրելու

իրենց արժեքները։ Բենկսի մշակած արժեքների հստակեցման մեթոդը բաղկացած է հետեւյալ քայլերից.

1.Արժեքային պրոբլեմների ձեւակերպում եւ գիտակցում։

2. Արժեքի հետ առնչվող վարքագծի նկարագրություն։

3. Նշել այն արժեքները, որոնց օրինակ է նկարագրվող վարքագիծը։

4. Պարզել, թե նկարագրվող վարքագծի մեջ ինչ հակադիր արժեքներ կան։

5. Վերլուծված արժեքների արմատների շուրջ վարկածներ առաջադրել։

6.Այլընտրանքային արժեքների իմացություն։

7. Վերլուծված արժեքների հնարավոր հետեւանքների շուրջ վարկածներ առաջադրել։

8. Նախընտրելի արժեքների հռչակում։

9. Արժեքների ընտրության պատճառների, աղբյուրների եւ հնարավոր հետեւանքների թվարկում։

3.Քաղաքացիական գիտակցության սկզբունք

Հայրենասիրության կարեւորագույն դրսեւորումներից է նաեւ քաղաքացիությունը, քաղաքացիական գիտակցությունը՝ պատասխանատվությունը սեփական երկրի զարգացման, պետության քաղաքական եւ հասարակական հաստատությունների եւ կառույցների գործունեության անխափան աշխատանքի, ինչպես նաեւ սեփական իրավունքների եւ պարտականությունների իրազեկման եւ իրականացման համար։

4. Ինքնադաստիարակության եւ դաստիարակություն սկզբունք։

Մարդու արդյունավետ գործունեության համար կարեւոր է ինքնադաստիարակությունը, ինքնախնամքը։ Մարդու ապրումակցման, հասկանալու, բարի գործեր կատարելու, չարը բացահայտելու եւ նրան դիմակայելու որակները համարվում են առանցքային բարոյական հատկանիշներ, որոնք պետք է ձեռք բերել կենսագործունեության ընթացքում՝ սեփական անձը կրթելու միջոցով։

Հասարակության մեջ է անհատը գործում, սիրում, ապրում, մարտնչում, տառապում։

Սոցիոլոգ Մաքս Վեբերը գտնում է, որ մարդկանց ոչ բոլոր փոխհարաբերություններն են հասարակական։

Մարդու գիտելիքների եւ հմտությունների տիրապետման գործընթացը, վարքագծի դրսեւորման ձեւերը, որոնք մղում են մարդուն դառնալ հասարակության անդամ, շրջակա միջավայրում ճիշտ գործել եւ փոխհարաբերակցվել, կոչվում է սոցիալականացում (հասարակակայնացում)։ Այն կարեւոր գործոն է մարդու ինքնադաստիարակության համար։

Այսօր ազգային դաստիարակության մասին խոսելիս հատուկ ուշադրություն է դարձվում դաստիարակության էության ճիշտ ըմբռմանը։ Ազգային ու համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում։ Դաստիարակության միջոցով զարգացնելով անհատին զարգացնում ենք եւ մարդկությունը, որի անդամներն են անհատ անձնավորություններն ու ազգերը։ Քաղաքակիրթ ազգերի մտահոգության առարկան ազգային դաստիարակությունն է, ուստի հայերը եւս պետք է մտահոգվեն այս կարեւոր խնդրով։ Սակայն ազգային դաստիարակությունը չպետք է մոռանա, որ «դաստիարակությունը պիտի պատրաստի լրիվ եւ կատարյալ մարդ»։[2]

Հայեցի դաստիարակության հիմախնդիրը քննարկման առարկա դարձնելիս հույժ կարեւոր է հետեւել հարցի քննարկմանը. Կարելի՞ է, արդյոք, բացահայտել նաեւ ազգի թերությունները։

Պատահական չէ նաեւ հարցադրումը, քանի որ իրականության մեջ ազգատյաց են համարել եւ, ըստ երեւույթին, համարում ազգի թերությունները քննադատողներին։ Սա Հ. Հինդլյանի խոստովանությունն է։ Սակայն նա նման մարդկանց համադում է անտարբեր ազգի շահերի նկատմամբ։ «Ազգասերն նա է, որ գիտե տեսնել ազգի թերությունները (նախանձ, անկարգապահություն,

[2] Մանդինյան Ա. , Համառոտ մանկավարժություն, Թիֆլիս, 1978, էջ 211։

պատասխանատվության ցգաման պակաս, անհամերաշխություն եւ այլն) եւ իրովսանն կճգնի զանոնք ուղղելու»։[3]

Իրենց ամենօրյա պրակտիկայում ուսուցիչները պետք է ներառեն հետեւյալ սկզբունքները. Բնութագրումը, դաստիարակության հասարակական ուղղվածությունը, դաստիարակության կապը կյանքի հետ, դաստիարակությունն աշխատանքի մեջ, դրականի վրա հենվելը, համագործակցությունը, հետեւողականությունը, անընդհատությունը, նպատակի իրատեսականությունը, դաստիարակության անձնային ուղղվածությունը։

5. Հիմնավորվածության եւ անկողմնակալության սկզբունքը։

Հասարակության ժողովրդացումն ու յուրաքանչյուր անհատի համակողմանի կրթություն ստանալու իրավուքի ընդունումը հնարավորություն տվեցին նախկինում «ազնվական» համարվող կրթական տարրը ներմուծել հանրակրթական դպրոց։ Արդի աշխարհում «հայեցի» դասավանդումը կարեւոր է եւ՝ նեղ՝ առարկայական տեսանկյունից, եւ՝ լայն՝ աշխարհայացքային։ Առարկայական տդսանկյունից կարեւոր է, որ միջնակարգ կրթություն ստացած քաղաքացին հասկանա ու կարողանա տարբերակել իրեն հրամցնող նյութի բարձրարժեք կամ ցածրարժեք լինելը համընդհանուր գործածում ստացած հասկացությունների հորձանուտում։

Իսկ լայն՝ աշխարհայացքային տեսանկյունից հայեցի դաստիարակության նշանակությունը մարդու համակողմանի ձեւավորման մեջ է, իրականության ընկալման ու առկա ներդաշնակության գնահատման-արժեւորման-պահպանման կարողության մշակման մեջ։ Շատ կարեւոր է ազգային ընկալման ձեւավորումը եւ փոխառածի ու սեփականի տարբերության գիտակցումը։

6. Ազատության եւ պատասխանատվության սկզբունք։

Մարդն իր սեփական սոցիալական դերն իրականացնելու համար պետք է հնարավորություն ունենա ընտրություն կատարել կենսագործունեության

[3] Հինդլյան Հ. , Անկեղծ էջեր, Կ. Պոլիս, 1913-1922, էջ 475։

համար ցանկալի ձեւերից, որը հայտնի է որպես ազատություն։ Ազատության ժամանակակից ընկալումը առնչվում է բնության եւ հասարակության մեջ նրա անհրաժեշտությամբ։ Լինել ազատ նշանակում է գիտակցել այն բոլոր սահմանափակումները, որոնք աշխարհին հնարավորություն եմ տալիս մնալ ամբողջական, իսկ մարդուն՝ գործել աշխարհի օբյեկտիվ օրենքների համաձայն։ Հետեւաբար, ազատությունն այլընտրանքների գիտակցման հետ է առնչվում, որոնց միջոցով մարդիկ ընտրություն են կատարում եւ կրում պատասխանատվություն իրենց ընտրության եւ գործունեության համար։ Առանց պատասխանատվության չկա ազատություն…

Հայեցի դաստիարակությունը, սկզբունքները, եղել եւ մնում է արդի հասունացող սերնդի հիմնական նպատակը։

Սկզբունքի սխեման



1Անհատականացման

2Բարոյականության եւ արժեքների հստակեցման

3Քաղաքացիական գիտակցություն

4Ինքնադաստիարակություն եւ դաստիարակութրուն

5 Հիմնավորվածության եւ անկողմնակալության

6 Ազատության եւ պատասխանատվության

Հետազոտության ընթացք

Հայեցի դաստիարակության սկզբունքներին հասարակագիտության ժամերին անդրադարձել եմ այս հետազոտական աշխատանքի ընթացքում, որոնք լուրջ քննարկման առարկա են դարձել: Փորձել եմ ցույց տալ նորովի մոտեցումները հայեցի դաստիարակությանը հասարակագիտուղության ժամերին: Փորձել եմ տալ «ազգային էակ», «ազգային ենթագիտակցություն», «ազգային իդեալ», «բարոյական արժեքներ» հասկացությունների բացահայտման ծավալն ու բովանդակությունը, որոնք մեծապես կարեւորում են հայ ազգային դաստիարակության ամբողջական եւ այսօրվա ու մեր հեռանկարային պահանջմունքներին բավարարող հայեցակարգ ստեղծելու իմաստով: Կարեւորում եմ նաեւ «դաստիարակությունը ազգի մեջ, ազգի միջոցով եւ ազգի համար» սկզբունքը:

Հետազոտությունս կատարել եմ ութերորդ դասարանում երկրորդ ժամով, թեման է եղել Մարդ եւ հասարակություն, իսկ դասը եղել է Մարդը եւ նրան շրջապատող բնական ու հասարակական միջավայրը: Հաջորդ դասը անցկացրել եմ տասներորդ դասարանում, երրորդ դասաժամին, թեման եղել է Գեղեցիկը տարբեր մշակութային միջավայրերում, իսկ դասը՝ Գեղեցիկը արվեստի տարբեր բնագավառներում:

Հաջողության հասնելու նպատակով առաջնորդվել եմ դիդակտիկայի՝ զննականության, մատչելիության, հաջորդականության, պարբերականության սկզբունքներով՝ պահպանելով ներառարկայական եւ միջառարկայական կապերը, հիմք ընդունելով դասի ճանաչողական հետաքրքրությունները, որոնք նպաստել են սովորողների ակտիվությանն ու դրական դրդապաճառների ապահովմանը:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրել եմ սովորողների զարգացածության աստիճանը, հետաքրքրությունների շրջանակները, վերաբերմունքը դպրոցի եւ հասարակագիտություն առարկայի նկատմամբ:

Պարզվել է, որ կան.

1. Սովորել չցանկացողներ - 5%
2. Սովորել ցանկացողներ, բայց «անընդունակներ» - 25%
3. Սովորել ցանկացողներ եւ ընդունակներ - 70%



Կարեւորել եմ կրթության բովանդակությունը, ինչը հնարավորություն է տվել այսօրվա դպրոցականին հաղորդակից դարձնել ազգային արժեքներին, նրա մեջ սերմանել ազգային ինքնագիտակցություն, որը ժառանգված է նախնիներից : Հատկապես սովորել չցանկացողներին գրավում է արհեստներին տիրապետելը, ոմանց առեւտրային գործերը եւ բիզնեսի մեջ ներգրավելը՝ հիմք ընդունելով նյութական օգուտը եւ բարիքները:

Հետազոտության ժամանակ հայրենիքի մասին աշակերտների իմացությունը ստուգելու նպատակով կազմակերպել ենք այնպիսի բանավեճեր, որտեղ բացահայտվել են աշակերտների մտածողության ուղղվածությունը:

Հետազոտությունը անցկացնելիս արժեւորել եմ աշակերտների մտքերը եւ կարծիքները.

10-րդ դասարանի աշակերտուհու կարծիք. «Հայերը հիմնականում գնում են եվրոպականացման, այսինքն օտարին են ավելի ձգտում: Հայոց պատմություն, հասարակագիտություն առարկաները նպաստում են, որ հայը հայ մնա, որ մեր

ունեցածը պահպանելով ենք մինչեւ այսօր հասել, եւ պետք է շարունակենք մեր ուղին…»։

Պետության գաղափարախոսության եւ հասարակագիտության դասավանդման մասին խոսելիս հետեւյալ ձեւակերպմամբ հանդես եկավ 7-րդ դասարանի մի աշակերտուհի. «Ճանաչել քո պատմությունը, ճանաչել քո մեծերին,որ հետո ինչ-որ մի տեղ քեզ օրինակ վատ չզգաս, որ «ռուսը» քո պատմությունը ավելի լավ գիտի, քան դու քո հայ լինելով հանդերձ»։

Եզրակացություն

Ամեն ազգի խնդիրն է ապահովել իր սերնդի կրթությունը եւ դաստիարակությունը՝ ձեւավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումների եւ հատկապես, բարբառախոս միջավայրի պայմաններից ելնելով։

Մշակված սկզբունքները ներկայացնում են կարեւոր աղբյուր նրանց համար, ովքեր ցանկանում են օգտագործել այն ուսումնական հաստատություններում։ Սկզբունքները կադող են օգտագործվել տարբեր նպատակներով։ Օրինակ՝ նրանք կարող են օգտագործել որպես գործիքակազմ նրանց համար, ովքեր պետք է մշակեն, կիրառեն կամ գնահատեն ուսուցողական գործողությունները եւ կրթական նախաձեռնությունները, սովորողների ժողովրդավարական, հայեցի դաստիարակությունը ձեւավորելիս եւ զարգացնելիս։

Հետազոտությունը ապացուցեց, որ ներկա սերունդը անդավաճան կերպով սիրում է իր հողը, լեզուն, հայրենիքը, ժողովրդին։

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում նրանց պակասի պատճառով։Գարեգին Նժդեհ։

Գրականության ցանկ

1. Երկխոսություններ դաստիարակության մասին, Վ. Ն. Ստոլետովի խմբագրությամբ, Երեւան, Լույս,1990։
2. Պետրովսկի Ա. Վ., Ընդհանուր հոգեբանություն, Երեւան, 1974։
3. Գեւորգյան Հ., Հասարակագիտության հիմունքներ, Երեւան, Կրթական բարեփոխումների կենտրոն, 2003։
4. Ս. Վ. Թովմասյան, Հայեցի դաստիարակության հիմունքները, Ստեփանակերտ, 2006։
5. Սիմոնյանց, Հայ մանկավարժության պատմություն, Երեւան, 2006։

Դասի պլան

Ուսուցիչ-Մարինե Պետրոսյան

Առարկա-Հասարակագիտություն

Դասարան-8-րդ

Թեմա-Մարդ եւ հասարակություն

Դաս 1-2, Մարդը եւ նրան շրջապատող բնական ու հասարակական միջավայրը

Դասի նպատակը-Սովորելով այս դասը աշակերտները կկարողանան վերլուծել <<մարդ>>, <<բնություն>> եւ <<հասարակություն>> հասկացություններն ու մեկնաբանել բնության, մարդու եւ հասարակության փոխկապվածությունը։ Կկարողանան ամբողջական պատկերացում կազմել հասարակություն-բնություն հարաբերությունների մասին։

Դասի խնդիրը-Մարդկային հասարակությունն ինչպիսի վերաբերմունք պետք է դրսեւորի բնության հանդեպ, որպեսզի վերջինս շարունակի գոյատեւել իր բազմազանության եւ ներդաշնակության մեջ, եւ որպեսզի հաջորդ սերունդները հնարավորություն ունենան ապրելու մաքուր եւ անվտանգ միջավայրում։

Վերջնարդյունքները-1.Սահմանել բնություն հասկացությունը։ 2. Գաղափար կազմել իդեալի եւ մատերիայի մասին։ 3. Արժեւորել բնության պահպանումը, էկոլոգիայի կարեւորությունը եւ տնտեսագիտության անհրաժեշտությունը։

Միջառարկայական կապեր-պատմություն, բնություն, տնտեսագիտություն։

Խաչվող հասկացություններ- օրինաչափություններ

-Պատճառ եւ հետեւանք

-Կողմնորոշում ժամանակի եւ տարածության մեջ։

Դասի անդրադարձ։

Դասի ավարտին երեք հարցի միջոցով ստուգել աշակերտը հասավ վերջնարդյունքին, թե ոչ։

1.Ի՞նչ է բնությունը։

2. Որո՞նք են հասարակություն-բնություն հարաբերությունների չորս փուլերը։

3.Ի՞նչ է նշանակում <<էկոլոգիա>> բառը։

Գնահատում- փոխադարձ գնահատում

Տնային աշխատանք-Գրեք շարադրություն բնության մասին.<<Եթե ես լինեի ամենազոր…>> թեմայով։

Դասի պլան

Առարկա-Հասարակագիտություն

Դասարան-10-րդ դասարան

Թեմա-Ի՞նչ է գեղեցիկը

Դաս- Գեղեցիկը տարբեր մշակութային միջավայրերում

Դասի նպատակը-Տվյալ դասի արդյունքում աշակերտները կկարողանան գեղեցիկի իրենց սովորած ձեակերպումներն օգտագործելով վեր հանել գեղեցիկի տարբեր ընկալումները տարբեր մշակույթների մարդկանց համար։

Դասի խնդիրը- Հիմնավորել գեղեցիկի հարաբերականության խնդիրը։

Վերջնարդյունքները-Այս դասն իր հիմքում ունի կառուցողական մոտեցում, երբ սովորողները իրենց ունեցած գիտելիքներն ու արժեքային մոտեցումներն են օգտագործում՝ հանգելով որոշակի հետեւությունների, ապա սովորում, յուրացնում են նոր նյութն ու դարձյալ գալով որոշակի եզրակացությունների հնարավորություն են ստանում իրենց վրա անմիջականորեն զգալ նոր գիտելիքի ու արժեքային մոտեցման ազդեցությունը։

Դասի ընթացքը-Դասը սկսվում է անհատական աշխատանքով, յուրաքանչյուր աշակերտ լրացնում է առաջարկված աղյուսակը։ Ապա երեխաները միավորվում են փոքր խմբերում, որտեղ միասին քննարկել-բանավեճելով՝ լրացնում են երկրորդ աղյուսակը։ Ցանկալի է աղյուսակը խմբերում լրացնելուց հետո համադասարանական քննարկում անել անդրադարձ կատարելով քննարկման համար առաջադրված հարցերին։

Միջառարկայական կապեր- կերպարվեստ, պատմություն, երաժշտություն։

Խաչվող հասկացություններ- օրինաչափություններ

-Կայունություն եւ փոփոխություն

-Անհատներ եւ հարաբերություններ

Գնահատում- օգտագործել գնահատման սանդղակը

Տնային աշխատանք- աշակերտներին առաջարկել կոլեկտիվ այցեր կազմակերպել գեղեցիկին առնչվող տարբեր հասարակություններ, երաժշտության ունկնդրումներ, կինոդիտումներ իրականացնել, հանգել որոշակի եզրակացությունների: